ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

0026, ք.Երևան Գ.Նժդեհի 23, հեռ..44-88-94, էլ.փոստ. criminalcourt@arminco.com

Լ.Դ/0012/11/12 06 դեկտեմբերի 2012թ.

<<Հելսինկյան Քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ>> ՀԿ-ին
/Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59/

Ուղարկվում է ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի 05.12.2012թ. կայացրած որոշման պատճենը:

Առդիր որոշման պատճենը 1 օրինակից /3 թերթից/:

ԴԱՏԱՎՈՐ՝ Կ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Գործ Հ ԼԴ/0012/11/12
Երևան

05.12.2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Կ. ՂԱԶԱՐՅԱՆ
Քարտուղարությամբ՝ Մ. Սամսոնյանի
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝
Դատախազ՝ Ա. Պողոսյանի

Դռնբաց դատական նիստում դատախազ Ա. Պողոսյանի վերաքննիչ բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով <<<<Քրեական գործի հարուցումը մերժելու մասին>> քննիչի 26.04.2012թ. որոշումը վերացնելու վերաբերյալ <<Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ>> ՀԿ-ն ներկայացուցիչ Կ. Թումանյանի բողոքը քննության առնելու մասին>> ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի /այսուհետ՝ Դատարան/՝ 16.10.2012թ. որոշման օրինականության և հիմնավորվածության հարցը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը և փաստական հանգամանքները.

10.04.2012թ. Լոռու մարզի դատախազություն և ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչություն է ստացվել <<Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ>> ՀԿ-ի թիվ Ե/202-16.04/144 գրությունն այն մասին, որ նշված գրասենյակի դիմաց կազմակերպվել է երթ, որի ընթացքում կոտրվել են գրասենյակի լուսամուտների ապակիներն ու մարմնական վնասվածք է ստացել նույն գրասենյակի աշխատակցուհի Մարիետա Թեմուրյանը:

Այդ կապակցությամբ նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ ԵԿՄ-ն Վանաձորի տարածքային ստորաբաժանման նախագահ Ռազմիկ Մաղարյանը, ԶԼՄ-ներից տեղեկանալով, որ ոմն Գեորգի Վանյանը պատրաստվում է <<Ստոպ>> կինոփառատոնի շրջանակներում վերը նշված ՀԿ-ուն գրասենյակում 17.04.2012թ.

ցուցադրել ադրբեջանական ֆիլմեր, կատարել է ֆիլմերի ցուցադրությունը չեղյալ հայտարարելու կոչով ստորագրահավաք, ապա Վանաձորի Մեծ Հայքի հրապարակում շտապ հավաք ու այնտեղից դեպի հիշյալ գրասենյակ երթ կազմակերպելու համար պահպանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգը, գրություն է ուղարկել Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավար Սամվել Դարբինյանին: Դրանից հետո, 16.04.2012թ.-ին, իր համախոհներ Սամվել Օհանյանի, Վահե Միկիչյանի, Տիգրան Բաղոյանի, Արմեն Ներսիսյանի, Յուրիկ Ղուլյանի, Զավեն Էվոյանի և նյութերով չպարզված այլ անձանց հետ, Մեծ Հայքի հրապարակում շտապ հավաք են կազմակերպել ու հավաքված ստորագրություններով փաստաթուղթը ՀԿ-ն նախագահ Արթուր Սաքունցին հանձնելու նպատակով երթով քայլել են դեպի գրասենյակ: Ճանապարհին հիշյալ անձանց միացել են նաև համախոհ այլ քաղաքացիներ: Հասնելով Վանաձորի Տիգրան Մեծի 59 հասցեում գտնվող ՀԿ-ն տարածք՝ երթի մասնակիցները կոչ են արել և պահանջել Արթուր Սաքունցից դադարեցնել ադրբեջանական ֆիլմերի ցուցադրությունը՝ այն համարելով ազգային արժանապատվությունը նսեմացնող հանգամանք: Այնուհետև երթի մասնակիցներն ադրբեջանական ֆիլմերի ցուցադրությունը չեղյալ հայտարարելու վերաբերյալ ստորագրահավաք փաստաթուղթը հանձնել են Արթուր Սաքունցին: Նա բարձրախոս սարքով երթի մասնակիցների ներկայությամբ հայտարարել է, որ ադրբեջանական ֆիլմերի ցուցադրությունն անորոշ ժամանակով հետաձգվում է, սակայն այդ հանգամանքը զայրույթ է առաջացրել երթի մասնակիցների մոտ, որոնցից մի քանիսը՝ որպես դժգոհության նշան, հավկիթներ են նետել գրասենյակի ուղղությամբ:

Այդ ընթացքում երթի մասնակիցներից ՀՀ-ն և Արցախի սահմանների պաշտպանական ու մարտական գործողությունների մասնակից Մարգարիտա Խաչատրյանը՝ որպես դժգոհության նշան, իր ձեռքին եղած թվով երկու քարով դիտավորությամբ հարվածել և կոտրել է գրասենյակի երկու պատուհանների ապակիները, իսկ այդ քարերից մեկն ազգուշությամբ դիպել է նաև գրասենյակում գտնվող աշխատակցուհի Մարիետա Թեմուրյանին: Դրանից հետո, երթի մասնակիցները Ռազմիկ Մադարյանի գլխավորությամբ պահանջել են Արթուր Սաքունցից, որպեսզի ոչ թե հետաձգի, այլ ընդհանրապես չցուցադրի ադրբեջանական ֆիլմերը: Այդ ընթացքում, երթի մասնակիցներից նյութերով չպարզված անձը պոկել ու վնասել է նաև գրասենյակի պատին փակցված պաստառը և հեռակառավարման վահանակի հենակը, որից հետո կազմակերպիչները հանդարտեցրել են հավաքի մասնակիցներին, շարունակել բանակցությունները, որից հետո Արթուր Սաքունցը հայտարարել է, որ ադրբեջանական ֆիլմերի ցուցադրությունը ՀԿ-ում տեղի չի ունենա և միայն դրանից հետո երթի մասնակիցները հեռացել են գրասենյակի տարածքից:

Ռազմիկ Մադարյանը, Սամվել Օհանյանը, Վահե Միկիչյանը, Տրգրան Բաղոյանը, Արմեն Ներսիսյանը, Յուրիկ Ղուլյանը և Զավեն Էվոյանն իրենց բացատրություններով նշել են, որ երթը կազմակերպվել է խաղաղ նպատակներով, որևէ անձի կամ գույքի վնաս պատճառելու դիտավորություն չի եղել, երթը կազմակերպված է եղել բացառապես ադրբեջանական ֆիլմերի ցուցադրումն արգելելու նպատակով և կարևոր չի եղել, թե որտեղ պետք է դրանք ցուցադրվեին: Գույքային կամ որևէ անձի վնաս պատճառելու կոչեր ու սպառնալիքներ չեն եղել:

ՀԿ-ն աշխատակցուհի Մարիետա Թեմուրյանը բացատրություն է տվել, որ 16.04.2012թ., ժամը 10:30-11:00-ի սահմաններում, գտնվել է աշխատանքի վայրում, երբ զրասենյակ են եկել քաղաքացիներ և պահանջել ադրբեջանական փառատոնի շրջանակներում չցուցադրել ֆիլմերը: Այդ ընթացքում ինքն ապակու կոտրվելու ձայն է լսել ու զգացել ոտքի ցավ, ինչից հասկացել է, որ դրսից նետած քարը դիպել է ոտքին: Ինքը հեռու է կանգնած եղել և չի լսել, թե հավաքվածները կոնկրետ ինչ են խոսել, զրասենյակի ներսում հայհոյանքներ չի լսել:

Մարգարիտա Խաչատրյանը բացատրություն է տվել այն մասին, որ 16.04.2012թ., այգով անցնելիս երկու քար է վեցրել իր բնակարանում գտնվող ծաղկամանը զարդարելու համար, ապա քայլել դեպի կանգառ: Մեծ Հայքի հրապարակում տեսել է, որ հավաք է, պաստառներից և խոսակցություններից հասկացել է, որ այն կազմակերպվել է հիշյալ ֆիլմերի ցուցադրումը արգելելու նպատակով ու միացել է նրանց երթին, նույնիսկ նշված զրասենյակում որպես հայ կին, հայ զինվոր խնդրել է Արթուր Սաքունցից չթույլատրել ֆիլմերի ցուցադրումը: Բանակցություններից հետո վերջինս դուրս է եկել բակ և բարձրախոսով հայտարարել, որ անորոշ ժամանակով հետաձգվում է ցուցադրումը, ինչը զայրույթ է առաջացրել ու չկարողանալով զսպել իրեն՝ ձեռքին եղած քարերը նետել է զրասենյակի պատի ուղղությամբ: Չի նկատել առաջինը ուր է ընկել, սակայն տեսել է, որ երկրորդը դիպել է ապակուն: Որևէ գույք վնասելու կամ որևէ անձի մարմնական վնասվածք պատճառելու դիտավորություն չի ունեցել: Ադրբեջանական ֆիլմերի ցուցադրումը համարում է ազգային արժանապատվությունը նսեմացնող հանգամանք և ընդամենն իր զայրույթն արտահայտել է քարեր նետելով:

Դատաբժշկական փորձաքննության թիվ 254 եզրակացության համաձայն, Մարիետա Թեմուրյանի մարմնական վնասվածքները՝ ձախ սրունքի քերծվածքը և արյունազեղումը հասցվել է բութ, կոշտ առարկայի անմիջական ներգործությամբ, հնարավոր է նշված ժամկետում ու հանգամանքներում, որոնք առողջության թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում:

Դատապրանքագիտական փորձաքննության թիվ 191 ԱՊ եզրակացության համաձայն, փորձաքննությանը տրամադրված պատռված ցուցապաստառի և հեռակառավարման վահանակի կոտրված հենակի անվնաս և ամբողջական վիճակի ընդհանուր միջին շուկայական գինը 16.04.2012թ. դրությամբ, հաշվի առնելով դրանց առկա ապրանքային վիճակը՝ կազմում է 17.000 դրամ, իսկ լուսամուտի կոտրված ապակու յուրաքանչյուրի արժեքը՝ 2400 դրամ:

Վերոգրյալը հիմնավորվել է նաև դեպքի վայրի զննության արձանագրությամբ և նյութերով ձեռք բերված այլ փաստաթղթերով:

Նյութերով հիմնավորվել է, որ Մարգարիտա Խաչատրյանը դիտավորությամբ վնասել է ՔԿԱ Վանաձորի զրասենյակի 4.800 դրամ արժողությամբ գույքը և անզգուշությամբ Մարիետա Թեմուրյանին պատճառել առողջության թեթև վնասի հատկաշներ չպարունակող մարմնական վնասվածք:

Վերոգրյալի հիման վրա՝ 26.04.2012թ. քննիչը որոշում է կայացրել Արթուր Սաքունցի կողմից ՀՀ Ոստիկանության Վանաձորի բաժին տրված հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերով մերժել քրեական գործ հարուցելը՝ Մարգարիտա

Խաչատրյանի և երթի մյուս մասնակիցների արարքներում հանցակազմի բացակայության հիմքով՝ նկատի ունենալով, որ երթի մասնակիցների կողմից դիտավորությունն ուղղված չի եղել հասարակական կարգը կոպիտ ձևով խախտելու, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք չի դրսևորվել, կազմակերպիչների ու մասնակիցների գործողությունները պայմանավորված են եղել իրենց ազգային արժանապատվությունն պահելու և հենց այդ պատճառով էլ կազմակերպվել է խաղաղ երթ, որի ընթացքում Արթուր Սաքունցի կողմից հիշյալ ֆիլմերի ցուցադրումից չհրաժարվելու մասին կատարված հայտարարությունն է պատճառ դարձել, որպեսզի երթի մասնակիցները տարբեր եղանակներով՝ որպես բողոքի նշան, արտահայտեն իրենց դժգոհությունները:

Նշված որոշումն Կ. Թումանյանի կողմից 05.05.2012թ. բողոքարկվել է ՀՀ Լոռու մարզի դատախազին:

Լոռու մարզի դատախազության ավագ դատախազ Ա. Պողոսյանի 07.05.2012թ. որոշմամբ բողոքը մերժվել է:

21.05.2012թ. ՀԿ-ն ներկայացուցիչ Կ. Թումանյանի կողմից բողոք է ներկայացվել Դատարան, որով խնդրել է վերացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի 26.04.2012թ. որոշումը:

Դատարանի 16.10.2012թ. որոշմամբ վերջինիս բողոքը բավարարվել է՝ վերացվել է քննիչի 26.04.2012թ.

2 .<u>Վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները.</u>

16.10.2012թ. որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել դատախազը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն, դատարանը պետք է ստուգի բողոքարկված որոշումների և գործողությունների օրինական ու հիմնավորված լինելը՝ կապված դատավարության մասնակիցների իրավունքների և ազատությունների հնարավոր խախտումների հետ, որի արդյունքում, հիմնվելով հետազոտված նյութերի վրա, բողոք բերած անձանց փաստարկների մանրակրկիտ ստուգմամբ, պետք է կայացնի հիմնավորված ու պատճառաբանված որոշում խախտումների առկայության կամ բացակայության մասին՝ առանց կանխորոշելու այնպիսի հարցեր, որոնք պետք է քննարկման առարկա դառնան գործի ըստ էության քննության ժամանակ:

Վալերի Գրիգորյանի վերաբերյալ գործով 25.07.2008թ. որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանի արտահայտած տեսակետի համաձայն, անհրաժեշտ է պարզել, թե նախապատրաստված նյութերով երթի ոչ բոլոր մասնակիցներից բացատրություններ վերցնելն արդյոք խախտել է կազմակերպության իրավունքներն ու օրինական շահերը, թե ոչ:

ՀՀ Վճռաբեկ դատարանը Մյասնիկ Ավետիսյանի վերաբերյալ քրեական գործով 29.06.2009թ. որոշմամբ արձանագրել է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն ու չհիմնավորված սահմանափակումներ,

ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները: Բողոքը ճանաչելով հիմնավորված՝դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան և անձի իրավունքները կամ պարտականությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին:

Ըստ բողոքաբերի, Դատարանը վերացնելով քննիչի որոշումը՝ ըստ էության դուրս է եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում իր ունեցած լիազորություններից, որի արդյունքում կայացրել է անհիմն դատական ակտ: Դատարանի որոշման նկարագրական մասում իսպառ բացակայում է պատճառաբանական մասը, պատճառաբանությունները մեկնաբանելու համար որևէ փաստարկ չի բերվել և չի նշվել արդյոք առկա է քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր, թե ոչ ու հատկապես ինչ պատճառներով պետք է հարցաքննվեին երթի բոլոր մասնակիցները:

ՀՀ Սահմանադրության 27, 29, 42 հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182 հոդվածի 1-ին և 5-րդ մասերի,

Ստացվում է, որ դատախազը պետք է քրեական գործ հարուցելու հիմքերի բացակայության պարագայում հարուցի քրեական գործ, սակայն Դատարանը չի նշել, թե կոնկրետ ՀՀ քրեական օրենսգրքով չթույլատրված ինչպիսի ենթադրաբար կատարված արարքներ կան նախապատրաստված նյութերում:

Նախապատրաստված նյութերով ամբողջությամբ հիմնավորվել է, որ ՀԿ-ն ոչնչացված և վնասված ամբողջ գույքի ընդհանուր արժեքը չի գերազանցում ՀՀ քրեական օրենսգրքի 185 հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված զգալի չափերը, միաժամանակ հիմնավորվել է նաև, որ երթի մասնակիցների դիտավորությունն ուղղված չի եղել հասարակական կարգը կոպիտ ձևով խախտելու, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք չի դրսևորվել, կազմակերպիչների և մասնակիցների գործողությունները պայմանավորված են եղել իրենց ազգային արժանապատվությունը պահելով ու հենց այդ պատճառով էլ կազմակերպվել է խաղաղ երթ, որի ընթացքում Արթուր Սաքունցի կողմից հիշյալ ֆիլմերի ցուցադրումից չհրաժարվելու մասին կատարված հայտարարությունն է պատճառ դարձել, որպեսզի երթի մասնակիցները տարբեր եղանակներով՝ որպես բողոքի նշան, արտահայտեն իրենց դժգոհությունները, ուստի, ըստ բողոքաբերի, բացակայում է նաև խուլիգանության հանցակազմը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380.1 հոդվածի համաձայն, վերաքննիչ բողոք բերելու հիմք է դատական սխալը, իսկ Դատարանի կողմից թույլ է տրվել դատական սխալ և կայացվել է անհիմն դատական ակտ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54 հոդվածով, 376 հոդվածի 1-ին մասով, 376.1 հոդվածի 5-րդ մասով, 380.1, 381, 395, 397, 398 հոդվածներով՝ բողոքաբերը խնդրում է Դատարանի 16.10.2012թ. որոշումը՝ քննիչի 26.04.2012թ. քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ բողոքը բավարարելու և քննիչի որոշումը վերացնելու վերաբերյալ, ամբողջությամբ բեկանել:

<u>3.Վերաքննիչ բողոքի դեմ բերված պատասխանը.</u>

Ի պատասխան վերաքննիչ բողոքի՝ Մարիետա Թեմուրյանի ներկայացուցիչ Կարեն Թումանյանը նշել է, որ բողոքաբերի այն պնդումն, որ Դատարանն ըստ էության դուրս է եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում իր ունեցած լիազորություններից և կայացրել է անհիմն դատական ակտ, անհիմն է:

Դատական ակտ կայացնելիս Դատարանը ղեկավարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածով, որի 5-րդ կետը սահմանում է քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշումը վերացնելու դատարանի լիազորությունը: Հետևաբար, Դատարանը գործել է օրենքով իրեն վերապահված վերը նշված լիազորության սահմաններում:

Տվյալ պարագայում Դատարանի խնդիրը չի եղել միայն քրեական գործ հարուցելու բավարար հիմքերի առկայությունը կամ բացակայությունը որոշելը: Դատարանը քննիչի որոշումը դիտարկել է այն տեսանկյունից, թե ոոոշմամբ անձի իրավունքներն ու օրինական շահերը խախտվում են, թե ոչ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախապատրաստված նյութերով չեն պարզվել երթի բոլոր մասնակիցները և չի պարզվել երթի մասնակիցների արարքները, անհիմն է բողոքաբերի այն պնդումը, որ երթի մասնակիցների դիտավորությունն ուղղված չի եղել հասարակական կարգը կոպիտ ձևով խախտելուն, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք չի դրսևորվել, կազմակերպիչների և մասնակիցների գործողությունները պայմանավորված են եղել իրենց ազգային արժամապատվությունը պահելով: Նշված փաստերը նախապատրաստված նյութերով չեն հիմնավորվել ու ձեռք բերված ապացույցները բավարար չեն նման հետևություններ կատարելու համար:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382 հոդվածի 1-ին մասը՝ Կ. Թումանյանը խնդրում է քննիչ Ն. Օսյանի 26.04.2012թ. որոշումը վերացնելու մասին Դատարանի 16.10.2012թ. որոշման դեմ դատախազի վերաքննիչ բողոքը մերժել և Դատարանի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

<u>4.Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

Վերաքննիչ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերլուծելով գործի նյութերը, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ բողոքը քննության առնելիս Դատարանի կողմից թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կհանգեցնեին դատական սխալի և հիմք կհանդիսանային կայացրած որոշումը բեկանելու համար, հետևաբար վերաքննիչ բողոքը պետք է մերժել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103 հոդվածի 1-ին մասի համաձայն, քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողություններն ու որոշումները կարող են սույն օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկվել դատավարության մասնակիցների կողմից: Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան դատախազին, դատարանին՝ վերադաս դատարան:Նշված օրենսգրքով նախատեսված դեպքերում քրեական հետապնդման մարմնի գործողություններն ու որոշումները կարող են բողոքարկվել դատարան:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175 հոդվածի համաձայն՝ քրեական գործ հարուցելու՝ նույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176 հոդվածի համաձայն՝ քրեական գործ հարուցելու առիթներն են՝ 1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին. 2) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները. 3) հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180 հոդվածի համաձայն՝ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

Այսինքն, համապատասխան որոշման կայացմամբ քրեական գործ կարող է հարուցվել կամ հարուցումը մերժվել միայն օրենքով նախատեսված օրինական առիթների և բավարար հիմքերի առկայության դեպքում, ու քրեական գործ հարուցելու առիթ կարող է հանդիսանալ ոչ թե ցանկացած, այլ միայն հանցագործության մասին տրված հաղորդումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

1) բացակայում է հանցագործության դեպքը.

2) արարքի մեջ հանցակազմ չկա.

/.../

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278 հոդվածի 2-րդ մասի համաձայն, դատարանը սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ հետախուզական գործողություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի,

քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն՝ դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին:

Դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի կարգով քննության առնելով բողոքը, իրավացիորեն հանգել է հետևության, որ պարզված չէ, թե ովքեր են երթի մյուս մասնակիցները, թե կոնկրետ ում կողմից ինչ արարք է կատարել և կատարված արարքն ինչ պատճառներով քրեական օրենքով նախատեսված չէ, կամ չի գնահատվում որպես հանցագործություն և կայացրել է որոշում բողոքը բավարարելու մասին, հետևաբար Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատարանի 16.10.2012թ. դատական ակտը հիմնավոր է և բողոքում նշված պատճառաբանությունները չեն կարող հիմք հանդիսանալ այն բեկանելու համար:

ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը՝ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103, 290, 393-394 հոդվածներով,

ՈՐՈՇԵՑ

Դատախազ Ա. Պողոսյանի վերաքննիչ բողոքը մերժել:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի /այսուհետ՝ Դատարան/՝ 16.10.2012թ. որոշումը՝ <<<<Քրեական գործի հարուցումը մերժելու մասին>> քննիչի 26.04.2012թ. որոշումը վերացնելու վերաբերյալ <<Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ>> ՀԿ-ն ներկայացուցիչ Կ. Թումանյանի բողոքը քննության առնելու մասին>>, թողնել օրինական ուժի մեջ:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարան՝ այն ստանալու պահից 15-օրյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Կ. ՂԱԶԱՐՅԱՆ